

Սույն թվականի հունիսի 7-11-ը Հայաստան Հանրապետությունում է Նորվեգական “Ստատենս կարտվերկ”-ի գույքային իրավունքների և զարգացման կենտրոնի պատվիրակությունը Հելգե Օսսրուդի գլխավորությամբ:

“Ստատենս կարտվերկ”-ը հիմնադրվել է 2005 թվականին օտարերկրյա պետություններում աջակցություն իրականացնելու նպատակով:

Կենտրոնը տարիներ շարունակ աջակցություն է ցուցաբերում Բալկանյան և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում նորվեգական ֆինանսավորմամբ ծրագրերի իրագործմանը, որոնք վերաբերում են անշարժ գույքի սեփականաշնորհման, գույքային իրավունքների պաշտպանության, քարտեզագրման և այլ հարցերին: “Ստատենս կարտվերկ” կենտրոնը ունի նշված բնագավառներում միջազգային ծրագրեր իրականացնելու հարուստ փորձ և գիտելիքներ:

2009 թվականին Նորվեգիայի “Ստատենս կարտվերկ”-ի փորձագետները ժամանեցին Հայաստան ուսումնասիրելու անշարժ գույքի ոլորտում ծառայությունները բարելավելու նպատակով Նորվեգիայի կառավարության կողմից Հայաստանին աջակցություն ցուցաբերելու կարևորությունը:

Այսօր ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ նախագահ Երվանդ Զախարյանը և գույքային իրավունքների և զարգացման կենտրոնի նախագահ Հելգե Օսսրուդը ստորագրեցին դրամաշնորհային ծրագրի իրականացման պայմանագիր:

Ներկայումս Հայաստանում գրանցման համակարգին խոչընդոտում են կրկնակի աշխատանքները, կապված տարբեր ծրագրային համակարգերի օգտագործման հետ, սեփականության տվյալների անհամատեղությունը, դժվար և դանդաղ մուտքի հնարավորությունը գույքային իրավունքների և քարտեզների բազա, իսկ քարտեզների բաշխման գործընթացում առկա են մի շարք խնդիրներ:

Հայաստանյան և նորվեգական կողմերի համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրի նպատակն է հիմնել գույքային իրավունքները ապահովելու թափանցիկ գրանցման համակարգ: Ծրագրի նպատակներից է եվրոպական ստանդարտներին համապատասխան քարտեզներ տրամադրող համակարգի ստեղծումը:

Ստորև թվարկված գործառույթները, 10 մլն նորվեգական կրոն դրամաշնորհի տրամադրման շրջանակներում նախատեսվում են իրականացնել երկու տարվա ընթացքում:

- ✓ Մանրամասներեն վերլուծել ներկա իրավիճակը միասնական գրանցման համակարգի համար Հայաստանի տարածքով մեկ, ինչպես նաև մատնանշել անհրաժեշտ բարելավումները արդյունավետ էլեկտրոնային համակարգի և քարտեզների բաշխման ծառայությունների համար:
- ✓ Ստեղծել կարողություններ հաստատուն և արդյունավետ գրանցման ծառայությունների մատուցման նպատակով կադաստրի պետական կոմիտեի կենտրոնական և 50 տարածքային ստորաբաժանումներում:
- ✓ Բարելավել կադաստրի պետական կոմիտեի կարողությունները քարտեզների պահպանման և բաշխման ուղղությամբ, դրանք եվրոպական ստանդարտներին համապատասխան զարգացնելու նպատակով:

ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ տեղեկատվության
և հասարակայնության հետ կապերի բաժին